ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հուլիսի 11-ից 13-ը շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանին, նախարարի տեղակալ Գայանե Գաբրիելյանին և նախարարի օգնական Խաչիկ Բեկյանին Իրանի Իսլամական Հանրապետություն (քաղաք Թեհրան) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԻՔ</u>**

   Հակոբ Սիմիդյան
   Գայանե Գաբրիելյան
   Խաչիկ Բեկյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ</u>**

   Շրջակա միջավայրի նախարար
   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ
   Շրջակա միջավայրի նախարարի օգնական

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>**

   Թեհրան (Իրանի Իսլամական Հանրապետություն)
   2022թ. հուլիսի 11-ից հուլիսի 13-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   Իրանի Իսլամական Հանրապետության կառավարություն

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

   Մասնակցություն «Շրջակա միջավայրի ոլորտում համագործակցություն հանուն ավելի լավ ապագայի» թեմայով հանդիպմանը

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>**

   Համաժողովի ընթացքում քննարկվել են.

   - շրջակա միջավայրի ոլորտում ընդհանուր մարտահրավերների և գլոբալ աղետների արդյունավետ հաղթահարման շուրջ ջանքերի միավորման հնարավորությունները,
   - ավազի և փոշու փոթորիկների կառավարման համար հետազոտությունների և գործողությունների հրատապ անհրաժեշտությունը,
   - համընդհանուր բնապահպանական ֆոնդ և ջանքերի միավորման կենտրոն ստեղծելու անհրաժեշտությունը,
   - տարածաշրջանում աճող բնապահպանական մարտահրավերների և դրանց լուծման համար տարածաշրջանային և անդրսահմանային համագործակցությունը,

- առողջ և կայուն միջավայր ստեղծելու համար լուծումներ գտնելու ուղիները՝ որպես հիմք տարածաշրջանի երկրների հասարակությունների հետագա բարեկեցիկ միջավայր ապահովելու գործում:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Համաժողովին հրավիրված էին մասնակցելու տարածաշրջանի 15 երկրների մասնակցիներ. բացակայում էին Ռուսաստանի, Պակիստանի, Ղազախստանի ներկայացուցիչները:

Ելույթի սկզբում անդրադարձ է կատարվել հայ-իրանական բարեկամական հարաբերություններին՝ մատնանշելով շրջակա միջավայրի պահպանության ոլորտում երկու երկրների միջև փոխգործակցության արդյունքում ձևավորված միջպետական համագործակցության շարունակական զարգացումն ու ամրապնդման անհրաժեշտությունը և կարևորվել ոլորտում առկա երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ աշխատանքների ծավալումն ու զարգացումը:

Հայաստանի Հանրապետությունն՝ ի դեմս Կառավարության, որդեգրել է բնապահպանական հավակնոտ օրակարգ, որում իր հատուկ տեղն ունի համագործակցությունն ինչպես բարեկամ և հարևան պետությունների, այնպես էլ միջազգային գործընկեր կազմակերպությունների հետ, որոնք տասնյակ տարիներ իրենց արդյունավետ առաքելությունն են իրականացնում տարածաշրջանում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում: Բացի այդ, ՀՀ Կառավարությունը մշակել է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանությանն ուղղված քաղաքականություն՝ առաջնահերթ ուղղությունների շարքում ներառելով շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների կայուն կառավարումը, զարգացումն ու պահպանությունը:

Կանաչ փոխակերպման և կլիմայի փոփոխությանը դիմագրավելու ուղղությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության տեսլականը հիմնված է կանաչ և ցածրածխածնային աճի սկզբունքների վրա, ինչը ենթադրում է հարմարվողականության և մեղմման ջանքերի ընդլայնում՝ սկսած անտառվերականգնումից մինչև վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության ներդրումներ:

Չնայած COVID-19 համավարակի և Լեռնային Ղարաբաղում 2020 թվականի 44-օրյա պատերազմի հետևանքով առաջացած մարտահրավերներին՝ Հայաստանի Հանրապետությունը հավատարիմ է մնացել գլոբալ բնապահպանական համաձայնագրերով ստանձնած իր պարտավորությունների արդյունավետ իրականացմանը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձեռնարկել է և շարունակում է իրականացնել գործողություններ՝ ուղղված կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականության իրականացմանն ու պլանավորման աջակցմանը, միևնույն ժամանակ՝ ինստիտուցիոնալ մակարդակում իրականացվող գործողությունների միջոցով անդրադառնալով արդեն իսկ առկա փոփոխություններին, և առանձնահատուկ շեշտադրելով կլիմայի փոփոխությանն առնչվող քաղաքականության և ծրագրերի կարևորությունը:

Անդրադարձ է կատարվել նաև ջրային ոլորտին առնչվող հարցերին (մասնավորապես՝ Արաքս սահմանային գետի) և խոսվել դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկվող քայլերից:

Երկկողմ հանդիպումներ.

1. Համաժողովի ընթացքում տեղի է ունեցել երկկողմ հանդիպում Իրանի Իսլամական Հանրապետության նախագահի տեղակալ, Իրանի բնապահպանության կազմակերպության նախագահ Ալի Սալաջեղեի հետ:

Անդրադարձ է կատարվել հայ-իրանական հարաբերություններին, որոնք գտնվում են բարձր մակարդակի վրա և երկուստեք փոխգործակցության արդյունքում տարբեր ոլորտներում արդեն իսկ գրանցել ենք նշանակալի արդյունքներ: Իսկ շրջակա միջավայրի ոլորտում համագործակցությունը զարգանում է բավականին դինամիկ և օգտավետ:

Խոսելով հայ-իրանական արդյունավետ համագործակցության փորձի մասին՝ անդրադարձել է կատարվել նաև Երևանում կայացած «Հայ-իրանական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 17-րդ նիստի» ժամանակ կնքված փոխըմբռնման հուշագրին, որով կողմերն արձանագրել են առևտրի, արդյունաբերության, առողջապահության, շրջակա միջավայրի, կրթության, մշակույթի, զբոսաշրջության, գյուղատնտեսության և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցությունը զարգացնելու երկկողմ պատրաստակամությունը:

Հանդիպման ընթացքում առավել մանրամասն քննարկվել են հուշագրով սահմանված պահանջներին համապատասխան համագործակցության քայլերը:

Անդրադարձ է կատարվել նաև Արաքս սահմանային գետի վերաբերյալ վերջին ամիսների արդյունավետ համատեղ աշխատանքին: Հայկական կողմի պատրաստակամությունն է հայտնել շարունակել համագործակցությունը խնդիրների լուծման ուղղությամբ և հույս հայտնել, որ այդ փոխգործակցության արդյունքում առաջիկայում առավել տեսանելի արդյունքներ կգրանցվեն:

Քննարկվել են ոլորտին առնչվող այլ ընթացիկ հարցեր:

Հանդիպման վերջում պարոն Ալի Սալաջեղեին առաջարկվել է այցելել Հայաստան՝ լիահույս լինելով, որ փոխայցելությունները կխթանեն առավել արդյունավետ համագործակցության և ձեռքբերված պայմանավորվածությունների կյանքի կոչմանը:

2. Տեղի է ունեցել հանդիպում նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալի և Իրանի բնապահպանության կազմակերպության նախագահի տեղակալի մակարդակով: Մանրամասն քննարկվել է «Հայ-իրանական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 17-րդ նիստի» ընթացքում կնքված փոխըմբռնման հուշագրով նախատեսված աշխատանքային քարտեզի նախագիծը, համաձայնություն է ձեռք բերվել համատեղ աշխատանքային խմբերի աշխատանքների վերսկսման ուղղությամբ:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպման ընթացքում ընդունվել է «Թեհրանի հռչակագիրը», որը կհանդիսանա ընդհանուր հիմք տարածաշրջանում հետագա համագործակցության համար և որի նպատակն է լինելու խթանել տարածաշրջանային համագործակցությունը՝ լուծելու բնապահպանական մարտահրավերները, որոնք ազդում են տարածաշրջանի երկրների շրջակա միջավայրի կայուն կառավարման վրա:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Հանդիպման ընթացքում առաջարկվել է կազմակերպել շրջակա միջավայրի պահպանության ոլորտին առնչվող հարցերով (մասնավորապես՝ ջրերի, հողերի, ավազի և փոշու, կենսաբազմազանության, թափոնների կառավարման) վերապատրաստումներ, փորձի փոխանակում:
- Իրանական կողմին առաջարկվեց ներկայացնել երկու երկրների աշխատանքերի վերսկսման աշխատանքային քարտեզի նախագիծը:
- Իրանի բնապահպանության կազմակերպության նախագահին առաջարկվել է այցելել Հայաստան. փոխայցելությունները կխթանեն առավել արդյունավետ համագործակցության և ձեռքբերված պայմանավորվածությունների կյանքի կոչմանը:
- Առաջակվել է հնարավորինս սեղմ ժամկետներում վերսկսել երկու երկրների մոնիթորինգային և մասնագիտական աշխատանքային խմբերի լիակատար աշխատանքները:

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան
19.07.2022թ.